

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝
Նախարարություն) հայտարարում է մրցույթ՝ Նախարարության համակարգում
ընդգրկված՝ հարյուր փոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող
բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի
հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

**ՀՀ առողջապահության նախարարության «Ավան» հոգեկան առողջության կենտրոն»
ՓԲԸ-ի տնօրեն**

- Թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է բարձրագույն կրթություն, առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա ստաժ,
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր),
- կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝ ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման, անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման, աշխատանքների բաշխման, կարգապահական պատասխանատվության, խարխուսանքի միջոցների կիրառման,
- ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ գույքի, ֆինանսական միջոցների տնօրինման, և գործարքներ կնքելու կարողություններ,
- Բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- չի լրացել հավակնորդի 65 տարին:

Լրացուցիչ պայմաններ՝ որոնք թեկնածուին տրախս են մրցակցային առավելություն.

- Գիտական կոչում կամ հրապարակված գիտական հոդվածների, մասնագիտացումների կամ արտերկրում վերապատրաստումների առկայություն, միջազգային գիտաժողովներին մասնակցություն
- Օտար լեզուների իմացություն:

Մրցույթը կանցկացվի 2019 թվականի **նոյեմբերի 29-ին ժ. 11⁰⁰-ին:**

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները լիազոր մարմին են ներկայացնում՝

- 1) դիմում.
- 2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.
- 3) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.
- 4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև գինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

7) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).

8) կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ), որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

- քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները :

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9⁰⁰-12⁰⁰, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2019 թվականի հոկտեմբերի 28-ը:

Մրցույթը կկայանա Նախարարության շենքում /ք.Երևան, Հանրապետության

հրապարակ Կառավարության տուն - 3 /Մրցույթին մասնակցել ցանկացող

քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին

ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարության աշխատակազմ /ք.Երևան Կառավարության

տուն – N 3 հեռ. 060-80-80-03 (1502)/: